6. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը.

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի» մասին օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

«Պետական տուրքի» մասին օրենքի 9-րդ հոդվածի 9.4 կետի համաձայն՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից նախապես վճարվել է 50,000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, ուստի, հաշվի առնելով, որ հայցը բավարարվել է, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 50,000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

_

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 109-րդ, 179-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. ԳԵՎՈՐԳ ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՍԵՓԻ Ա/Ձ-ի հայցն ընդդեմ «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության՝ «Երևան Ավտոբուս» ՓԲ ընկերության տնօրենի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 08.12.2025 թվականի կայացված թիվ ԵԱ1987 թիվ որոշումը/պարտադիր կատարման ցուցումը անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, բավարարել:

1.1. «Երևան Ավտոբուս» ՓԲ ընկերության տնօրենի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 08.12.2025 թվականի կայացված թիվ ԵԱ1987 թիվ որոշումը/պարտադիր կատարման ցուցումը անվավեր ճանաչել:

2. «Երևան Ավտոբուս» ՓԲ ընկերությունից հօգուտ ԳԵՎՈՐԳ ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՍԵՓԻ Ա/Ձ-ի բռնագանձել 50,000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE30-844E-4FBC-8162 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am